



**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ В. БРЮСОВА
BRUSOV STATE UNIVERSITY**

**ԲԱՆԲԵՐ
Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ВЕСТНИК ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ
В. БРЮСОВА
BULLETIN OF BRUSOV STATE UNIVERSITY**

**ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

ПЕДАГОГИКА И СОЦИАЛЬНЫЕ НАУКИ

PEDAGOGY AND SOCIAL SCIENCES

2 (61)

**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
«ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ - 2022

ՀՏԴ 37.01:82

DOI: 10.51307/182931072015233260-22.61-52

ԷԹՆՈԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ «ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՏՔՈՒՄ

ՆԱՆԵ ՄՈՎԱԽՍՅԱՆ

Համառոտագիր

Սույն հոդվածում անդրադարձ է կատարվում էթնոկարծրատիպերի վերլուծությանը «Միջմշակութային հաղորդակցություն» առարկայի շրջանակում: Էթնոկարծրատիպերի տեսակները ներկայացնելով՝ շեշտադրում է կատարվում թեման ուսումնասիրելու մեթոդներին: Անդրադարձ կատարելով ավտոկարծրատիպերին և հետերոկարծրատիպերին, առանձնացնելով դրական, բացասական և չեզոք տեսակները՝ ցույց է տրվում դրանց օրինակները ոչ միայն լեզվաբանության, գրականության, այլև՝ արվեստի մեջ:

Հոդվածում շեշտադրվում է այն, որ «էթնոկարծրատիպեր» թեմայի դասավանդման ընթացքում անհրաժեշտ է էթնոկարծրատիպերը ներկայացնել նկարչության, գրականության, կինոմատոգրաֆիայի, երաժշտության պատմության համատեքստում, վեր հանել մշակութային առանձնահատկությունները, շեշտադրել էթնոկարծրատիպերի լեզվաբանական կողմի՝ լեզվամտածողության կարևորությունը էթնոնիմների ձևավորման տեսանկյունից և այլն: Առաջ է քաշվում այն տեսակետը, որ երկխոսության մեթոդի, դերային բաշխման շնորհիվ ուսանողն էլ ավելի խոր պատկերացում է կազմում ներկայացվող թեմայի՝ էթնոկարծրատիպերի մասին և կարողանում է հստակորեն տարբերել կարծրատիպը էթնոկարծրատիպից, զատորոշել՝ արդյոք էթնոկարծրատիպն արտացոլում է տվյալ ազգի հոգեկերտվածքը, թե՛ ոչ, գնահատել էթնոկարծրատիպերի թե՛ դրական, թե՛ բացասական դերը միջմշակութային հաղորդակցության մեջ:

Հիմնաբառեր՝ էթնոկարծրատիպեր, միջմշակութային հաղորդակցություն, բացասական էթնոկարծրատիպ, դրական էթնոկարծրատիպ:

Ներածություն: «Միջմշակութային հաղորդակցություն» դասընթացը նախատեսված է միջմշակութային հաղորդակցություն ուսումնասիրող ուսա-

նողների համար: Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել միջմշակութային հաղորդակցության անհրաժեշտության, եզրույթաբանության և տարբեր մշակույթների առանձնահատկություններին: Դասընթացի վերջնանպատակն է ուսանողների՝ տարբեր մշակույթներ համեմատելու, նմանություններ ու տարբերություններ վեր հանելու կարողության ձևավորումը: Դասընթացի ընթացքում կիրառվում են տարբեր մեթոդներ և մոտեցումներ: Դասախոսությունները կառուցվում են ցուցադրման մեթոդի հիման վրա, որի շնորհիվ ներկայացվող թեման ուսանողների համար դառնում է առավել դյուրըմբռնելի: Երկխոսության մեթոդի շնորհիվ ուսանող-դասախոս, ուսանող-ուսանող երկխոսությունը թույլ է տալիս վեր հանել ներկայացվող թեմայի բազմաթիվ կողմերը՝ հարստացնելով նյութը: Քննարկվող թեմայի համատեքստում ձևակերպվում են հիմնախնդրային իրավիճակներ, որոնք լուծելով՝ ուսանողն էլ ավելի դյուրին է պատկերացում կազմում թեմայի մասին: Համագործակցային քննարկումների շնորհիվ ուսանողների դերային բաշխում է կատարվում, որը թույլ է տալիս ուսումնասիրվող մշակույթն էլ ավելի խորությամբ պատկերացնել:

«Միջմշակութային հաղորդակցություն» դասընթացի յուրացումը ստուգելու համար նախատեսված է երեք բաղադրիչ՝ սեմինար, մոդուլային աշխատանք, ինքնուրույն աշխատանք: Դասախոսությունը յուրացնելու նպատակով ուսանողներին տրվում է նաև տեսական նյութ, որի հիման վրա ուսանողը, հաջորդ դասին, ներկայացնում է տվյալ մշակույթին բնորոշ իրավիճակներ և լուծումներ՝ պայմանավորված արդեն հանձնարարության բովանդակությամբ:

Էթնոկարծրատիպերի դերը միջմշակութային հաղորդակցության մեջ: Էթնոկարծրատիպերի դերը միջմշակութային հաղորդակցության մեջ հասկանալու համար նախ պետք է ուսանողին բացատրել «էթնոկարծրատիպ» եզրույթը: Որպեսզի ուսանողն ամբողջական պատկերացում կազմի, անհրաժեշտ է եզրույթի սահմանումը ուղեկցել օրինակներով: Կարևոր է տարբերակել կարծրատիպը էթնոկարծրատիպից: Ցույց տալ վերոնշյալ երկուսի տարբերությունը: Էթնոկարծրատիպը մեկ էթնոսի պատկերացումն է մյուսի էթնոսի մասին, որը ինչպես կարող է համապատասխանել իրականությանը, այնպես էլ՝ ոչ: Օրինակ՝ բոլոր հայերն արծվաքիթ են: Անխոս, այս պնդումը որոշ իմաստով բնորոշ է մեզ՝ հայերիս, սակայն չի կարելի պնդել, որ չկա ոչ արծվաքիթ հայ: Կամ Շեքսպիրի «Վենետիկի վաճառականը» կատակերգությունում հրեա Շայլոկի միջոցով էթնոկարծրատիպ է ստեղծվում հրեա ժողովրդի մասին: Համաձայն այդ էթնոկարծրատիպի հրեան ներկա-

յանում է որպես վաշխառու, գծուծ, խաբեբա, մարդատյաց և այլն (Շեքսպիր 1922): Կարծրատիպը լայն իմաստով սահմանվում է իբրև նախապաշարմունք ինչպես ծանոթ, այնպես էլ անծանոթ երևույթի մասին: Կարծրատիպերի հիմք կարող է դառնալ առաջին տպավորությունը, անհատի մտածողության առանձնահատկությունը, հոգեկերտվածքը, զրույցի ընթացքում ստացած տեղեկությունը և այլն: Կարծրատիպն առավել լայն բովանդակություն ունի, քան՝ էթնոկարծրատիպը և եթե էթնոկարծրատիպը բնորոշում է որևէ էթնոսի, ապա կարծրատիպը պարտադիր չէ արտացոլի որևէ էթնոսի վերաբերյալ դրական, բացասական կամ չեզոք ընկալում:

Էթնոկարծրատիպերի ձևավորման հիմք կարող է հանդիսանալ նաև միջէթնիկական կոնֆլիկտը: Օրինակ՝ թուրքերի մասին էթնոկարծրատիպը, որը փոխանցվում է սերնդեսերունդ: Էթնոկարծրատիպերի ձևավորման գործում կարևոր դերակատարումունեն նաև ԶԼՄ-ները, ֆիլմերն ու մուլտֆիլմերը (James Craig Holte 1984):

Ավտոկարծրատիպեր և հետերոկարծրատիպեր: Որպեսզի ուսանողը հասկանա ավտոկարծրատիպերի և հետերոկարծրատիպերի տարբերությունները, անհրաժեշտ է ներկայացնել յուրայինի և օտարի պատկերը: Մենք՝ հայերս, ունենք բազմաթիվ ավտոկարծրատիպեր: Վառ օրինակ է վանեցիների մասին տարածված հայտնի խոսույթը, թե իբր վանեցիները ժլատ են, փողասեր, ոսկիասեր: Կամ մենք՝ հայերս, երբեմն մեզ վերագրում ենք հատկություններ, որոնց կրողը չենք, ինչի արդյունքում ձևավորվում են ավտոկարծրատիպեր: Նման օրինակ կարելի է դիտարկել հայի՝ աշխատասեր լինելու մասին ավտոկարծրատիպը: Այս պարագայում ոչ թե ռուսը, թուրքը կամ անգլիացին է մեզ վերագրում հատկություն, այլ մենք ինքներս մեր մասին ստեղծում ենք էթնոկարծրատիպեր: Հետևապես ավտոկարծրատիպը սահմանվում է որպես էթնոսի պատկերացումն ինքն իր մասին: Ավտոկարծրատիպերն իրենց բովանդակությամբ պարզ են, հստակ սահմանելի և առավելապես հիմնվում են ինքն իր մասին տվյալ ժողովրդի պատկերացման վրա: Ավտոկարծրատիպերը, առհասարակ, հիմնվում են ազգի՝ իրեն դրական լույսի ներքո ներկայացնելու, դրական արժևորելու և գնահատելու վրա (Жерновая, Смирнова 2014):

Արվեստում, օրինակ, կարելի է դիտարկել ավտոկարծրատիպերի հետևյալ օրինակները: Երբ Լեոնարդո դա Վինչին ստեղծեց Մոնա Լիզայի կտավը, այն հետագայում դարձավ իր ժամանակաշրջանի խտալացի կնոջ կերպարի խտացում: Իսկ Յան Վերմերի «Մարգարտե ականջօղով կինը»

ծեռք բերեց «Հյուսիսային կամ հոլանդական Մոնա Լիզայի» համարում: Արդեն հայ նկարչության մեջ Հակոբ Հովնաթանյանի «Նատալյա Թեումյանի» դիմանկարը դարձավ Մարտիրոս Սարյանի իսկ բնութագրմամբ հայկական Ջոկոնդա:

Երեք այս կտավների ցուցադրումը թույլ է տալիս ուսանողներին պատկերացում կազմել նաև արվեստում ստեղծված ավտոկարծրատիպերի մասին: Այս կտավներից յուրաքանչյուրն արտացոլում է իրժամանակաշրջանում իտալացի, հոլանդացի և հայ կնոջ հավաքական կերպարը: Եվ ինչ-որ իմաստով այս կտավները ստեղծում են իրենց ժամանակի կնոջ ավտոկարծրատիպը, որի շնորհիվ նաև հետագայում հնարավոր է դառնում վերստեղծել տվյալ ժամանակաշրջանի կնոջ կերպարը այլ ազգի ներկայացուցչի համար: Անխոս, նկարիչներն ի սկզբանե դժվար թե կտավների մեջ դրած լինեն իրենց ժամանակաշրջանի կնոջ ինքնությունը սահմանող իմաստ, սակայն հետագայում այդ կտավները կարելի է մեկնաբանել ինչպես ավտոկարծրատիպերի, այնպես էլ հետերոկարծրատիպերի տեսակետից:

Հետերոկարծրատիպերը սահմանելու համար անհրաժեշտ է տվյալ էթնոսին դիտարկել մեկ ուրիշ էթնոսի աչքերով: Րաֆֆին, օրինակ, «Կայծեր» վեպում առաջ է քաշում հարց՝ ի՞նչ է թուրքը և ի՞նչ է քուրդը: Նա քրդերին ներկայացնում է որպես գիր չունեցող, ավազակ, նամազի իմաստը չհասկացող, մեքենայաբար աղոթող, վերժխնդիր ազգի ներկայացուցիչ (Րաֆֆի 1963): Րաֆֆու այս նկարագրությունը հետերոկարծրատիպի վառ օրինակ է, քանզի նա նկարագրում է քրդին՝ լինելով այլ ազգի ներկայացուցիչ և դիտարկում է քրդին աշխարհահաճանաչողության իր դիրքերից: Հետերոկարծրատիպերի օրինակներ կարելի է գտնել նաև պոեզիայում, ֆիլմերում, մամուլում և այլն: Հետերոկարծրատիպերն իրենց բովանդակությամբ առավել բարդ են, քանզի դրանք ձևավորվում են սոցիոմշակութային, պատմական և այլ գործոնների ազդեցությամբ: Բերված օրինակները թույլ են տալիս ուսանողին հստակ պատկերացում կազմել ու ինքնուրույնաբար սահմանել՝ ինչ է ավտոկարծրատիպը և ինչ է հետերոկարծրատիպը:

Դրական, բացասական և չեզոք էթնոկարծրատիպեր: Էթնոկարծրատիպերն ունեն դասակարգման տարբեր հիմքեր: Լայն իմաստով կարելի է առանձնացնել դրական, բացասական, չեզոք էթնոկարծրատիպեր: Դրական, բացասական, չեզոք էթնոկարծրատիպերը տարբերակելու համար ուսանողին պետք է ներկայացնել երեք դատողություն՝ «Հայերը հյուրասեր են», «Ռուսները ծույլ են», «Անզլիացիները սիրում են ըմպել կաթով թեյ»:

Առաջին դատողությունը դրական էթնոկարծրատիպ է, քանի որ արժևորվում, գնահատվում է հայի դրական հատկությունը: Երկրորդ դատողությունը՝ «Ռուսները ծույլ են» բացասական էթնոկարծրատիպ է, քանի որ ծուլությունը չի կարելի դիտարկել որպես դրական երևույթ և հետևապես ռուսին բնութագրելով որպես ծույլ՝ ստեղծվում է բացասական էթնոկարծրատիպ: Չեզոք էթնոկարծրատիպի օրինակ է այն, որ «Անգլիացիները սիրում են ըմպել կաթով թեյ»: Այն, որ անգլիացիները սիրում են թեյ ըմպել և այլն էլ կաթով ո՛չ դրական, ո՛չ էլ բացասական հատկություն է, քանզի այն արտահայտում է տվյալ ազգի թեյ խմելու սովորույթը, նախընտրությունը: Դրական էթնոկարծրատիպը ստեղծում է տվյալ էթնոսի դրական պատկերը, արժևորում այն հատկությունները, որոնք նաև կարող են համարվել համընդհանուր արժեք: Օրինակ՝ հյուրասիրությունը, աշխատասիրությունը, մարդասիրությունը և այլն: Բացասական էթնոկարծրատիպերը ստեղծում են տվյալ էթնոսի այնպիսի դիմագիծը, որը բացասական հատկություններով է արտահայտվում: Օրինակ՝ ծուլությունը, մարդատյացությունը, անհյուրընկալությունը և այլն: Իսկ ահա չեզոք էթնոկարծրատիպերն իրենց մեջ չեն պարունակում արժևորման տարր: Այսինքն՝ դրանք ոչ թե առանձին հատկություններ են, որոնք բնորոշ են այս կամ այն ազգին և պարունակում են իրենց մեջ արժեքային տարր, այլ դրանք այս կամ ազգին բնորոշ վարքաձևեր և սովորույթներ են: Առհասարակ, ԶԼՄ-ները, տեղեկատվական տեխնոլոգիաները մեծ դեր ունեն թե՛ դրական, թե՛ բացասական, թե՛ չեզոք էթնոկարծրատիպեր ձևավորելու գործում: Դրական, բացասական և չեզոք էթնոկարծրատիպերն առավել պատկերավոր հասկանալու համար ուսանողին հանձնարարություն է տրվում կազմել նախ իր ազգի վերաբերյալ դրական, բացասական, չեզոք էթնոկարծրատիպերի աղյուսակ, ապա այն համեմատել այլ ազգի վերաբերյալ կազմված նույնատեսակ այլ աղյուսակի հետ: Լեզվահասարակագիտական ուղղվածությամբ ուսանողների համար կարևոր է նաև էթնոկարծրատիպերը վերլուծել լեզվաբանության տեսակետից: Տարբեր լեզուներում տարածված են արտահայտություններ, որոնք իրենց մեջ խտացնում են մեկ ազգի ամբողջական ինքնություն: Ուսանողների խնդիրն է վեր հանել այն արտահայտությունները, որոնք բնորոշում են նաև տվյալ ինքնությունը: Այդպիսի արտահայտությունների օրինակներ կարելի է փնտրել ինչպես ասացվածքներում, այնպես էլ առօրյա-կենցաղային խոսքում: Օրինակ՝ «հայկական համ», «գերմանական ճշտապահություն», «թուրքական դիվանագիտություն» և այլն: Այս արտահայտություններում արտացոլված է այդ ազգերի վերաբեր-

յալ ստեղծված էթնոկարծրատիպերը, որոնք իրենց բովանդակությամբ լայն են և խտացնում են իրենց մեջ տվյալ ազգի որոշակի բնութագիր: Հաճախ կիրառվում են նաև էթնոնիմներ: Այդպիսի էթնոնիմների օրինակներ են Frogs (Ֆրանսիացիներ), Dagos (իսպանացիներ), yellow-belly (չինացիներ) (Мучкина 2010:114): Կամ՝ կովկասցիներ, ասիացիներ, եվրոպացիներ: Վերջիններս ևս արտահայտում են որոշակի էթնոկարծրատիպ: Օրինակ՝ բռնկուն, կոշտ խառնվածքով մարդուն բնութագրելու փոխարեն կարող են ասել նաև՝ կովկասցի: Մեր լեզվամտածողության մեջ ընդունված էթնոկարծրատիպ է վատ արարքի գերադրական աստիճանը բնութագրել մեկ բառով՝ «թուրք», ինչն ի ցույց է դնում այդ էթնոսի վերաբերյալ մեր ունեցած բացասական վերաբերմունքը: Ուսանողին պետք է բացատրել նման էթնոկարծրատիպերի ծագման պատճառները՝ հիմնվելով պատմական, սոցիոմշակութային, հոգեկերտվածքային տվյալների: Էթնոկարծրատիպեր կան նաև իռլանդական անեկդոտներում, որոնց մեջ արտացոլվում է նրանց ինքնությունը (Seth Kravitz 1977):

Էթնոկարծրատիպերի դերը միջմշակութային հաղորդակցության մեջ: Պատկերացում կազմելով էթնոկարծրատիպերի մասին՝ ուսանողը կարող է վերլուծել, թե դրանք ինչ ազդեցություն կարող են ունենալ միջմշակութային հաղորդակցության վրա: Միջմշակութային հաղորդակցության մեջ, որպես տարբեր մշակույթների միջև երկխոսություն, առանցքային նշանակություն ունի էթնոկարծրատիպերի դերը: Միջմշակութային երկխոսությունն առավել պատկերավոր դարձնելու նպատակով ուսանողներին ներկայացվում է երեք ազգերի ներկայացուցիչների զրույցը, որոնցից յուրաքանչյուրն ունի ձևավորված էթնոկարծրատիպ մյուս ազգի ներկայացուցչի մասին: Դերային բաշխման միջոցով ուսանողները ծավալում են այդ զրույցը միմյանց միջև՝ ցույց տալով, թե ինչ էթնոկարծրատիպեր կան իրենց ներկայացրած ազգի մասին և որքանով են դրանք խոչընդոտում/օգնում միջմշակութային երկխոսության կայացմանը: Պարզ է դառնում, որ տվյալ ազգի մասին դրական էթնոկարծրատիպերն առավել հեշտ են դարձնում միջմշակութային շփումները, եթե այդ էթնոկարծրատիպերը համապատասխանում են իրականությանը, իսկ եթե չեն համապատասխանում, ապա միջմշակութային շփումները կարող են արդյունավետ չլինել: Որպես օրինակ կարելի է դիտարկել չեզոք էթնոկարծրատիպ. ամերիկացին ունի էթնոկարծրատիպ հնդիկ կանանց մասին առ այն, որ բոլոր հնդիկ կանայք ներկայանում են իրենց ազգային հագուստով: Ժամանելով Հնդկաստան՝ նա հայտաբերում է, որ հնդիկ կանանց որոշ հատված հագնվում է եվրոպական ոճի հագուստ կամ՝ ֆրանսիացի

ունի էթնոկարծրատիպ, որ բոլոր հայերը հյուրասեր են և հանդիպելով անհյուրասեր հայի՝ վերախնամաստավորում է իր էթնոկարծրատիպը հայերի մասին: Էթնոկարծրատիպերը հաճախ կարող են դառնալ տվյալ ազգի ճանաչողության կարևոր միջոց, եթե արտացոլում են իրականությունը: Այս պարագայում միջմշակութային հաղորդակցությունը կարելի է կառուցել արդյունավետորեն: Եթե դրանք ամբողջությամբ չեն արտացոլում իրականությունը, ապա կարող են դառնալ միջմշակութային չստացված հաղորդակցության պատճառ: Այս պարագայում երկխոսությունը կարող է չստացվել: Էթնոկարծրատիպերի առաջացման պատճառ կարող է դառնալ նաև առանձին անհատների վարքը, որի հիման վրա կարող են ձևավորվել էթնոկարծրատիպեր: Պայմանավորված էթնոկարծրատիպերի տեսակից՝ դրանք կարող են ինչպես խոչընդոտել միջմշակութային շփումները, այնպես էլ՝ կառուցել դրանք: Ֆիլմերի կամ կարճամետրաժ հոլովակների ցուցադրման շնորհիվ ուսանողներն ամբողջական պատկերացում են կազմում, թե ինչպես կարող է էթնոկարծրատիպը խոչընդոտել կամ նպաստել միջմշակութային երկխոսության կայացմանը: Չարլի Չապլինի «Մեծ բռնապետը» ֆիլմում, օրինակ, ներկայացվում է Հիտլերը՝ դրանով իսկ ստեղծելով նացիստական և ֆաշիստական գաղափարախոսությունը կրողների կարծրատիպ, որը, այդ ֆիլմը դիտող հանդիսատեսի մոտ կարող է ձևավորել բացասական էթնոկարծրատիպ՝ Հիտլերի կերպարը տարածելով ամբողջ գերմանացի ժողովրդի վրա: Ուսանողներին ցուցադրելով արևելյան մարտարվեստը ներկայացնող ֆիլմներից դրվագներ՝ պարզ է դառնում, որ հիմնվելով ֆիլմերին՝ նրանք էթնոկարծրատիպ են ստեղծում, որ տվյալ էթնոսին պատկանող բոլոր մարդիկ տիրապետում են այդ մարտարվեստին: Կամ մեկ այլ էթնոկարծրատիպ, երբ հնդկական ֆիլմերին հիմնվելով՝ այլազգիներից շատերը կարծում են, որ բոլոր հնդիկները հրաշալի երգում և պարում են: **Օրինակներ բերելու, էթնոկարծրատիպերը ֆիլմերում դիտարկելու շնորհիվ ցույց է տրվում, որ էթնոկարծրատիպերը երբեմն հապճեպ ընդհանրացման արդյունք են, և ուսանողների համար պարզ է դառնում, որ դրանք այնքան էլ չեն արտացոլում տվյալ ազգի հոգեկերտվածքը:** Որքան էլ զարմանալի թվա, երաժշտությունն անգամ կարող է ստեղծել էթնոկարծրատիպ այլ ազգի վերաբերյալ: Որպեսզի պարզ դառնա, թե ինչպես, ներկայացնենք Մոցարտի «Ռոնդո՝ թուրքական ոճով» կամ առավել հայտնի՝ «Թուրքական մարշ» ստեղծագործությունը: Քչերը գիտեն, որ Մոցարտն այն երբեք չի անվանել «Թուրքական մարշ» և այս անվանումը ծագել է այն պատճառով, որ ավստրիացիները մեծ

համակրանք ունեին առ ենիչերիական նվագախմբի կատարումները, և Մոցարտի ստեղծագործության այս հատվածը հիշեցնում էր իրենց համար սիրելի այդ նվագախմբի կատարումը, ուստի և անվանեցին «Թուրքական մարշ»՝ սրանով իսկ ստեղծելով էթնոկարծրատիպ այն մասին, որ թուրքերն իրենց շքերթների ժամանակ քայլում են նման երաժշտության ներքո: Այնինչ, պետք է նշել, որ ենիչերիականները երբեք չէին նվագում շքերթների ընթացքում, այլ նվագում էին դրանից առաջ:

Եզրակացություն: Միջմշակութային հաղորդակցության մեջ էթնոկարծրատիպերը մեծ տեղ ու դեր ունեն: Առհասարակ, դրանք «կարող են վերստեղծել իրենց ժամանակի հասարակարգն ու պատմությունը» (Fumiko Hosokawa 1980:15) «Միջմշակութային հաղորդակցություն» առարկայի համատեքստում «էթնոկարծրատիպեր» թեմայի վերլուծությունը կարևոր է՝ հիմնվելով թեման ներկայացնելու մի շարք մեթոդների վրա: Առանձնացնելով ավտոկարծրատիպերն ու հետերոկարծրատիպերը՝ դրանք անհրաժեշտ է ներկայացնել այնպիսի օրինակներով, որոնք ցայտուն կդարձնեն ոչ միայն հիշյալ հասկացությունների տարբերությունները, այլև կստեղծեն դրանց ամբողջական պատկերները թե՛ գրականության, թե՛ արվեստի, թե՛ կինեմատոգրաֆիայի մեջ: Դրական, բացասական, չեզոք էթնոկարծրատիպերի վերլուծությունը գեղարվեստական գրականության մեջ առավել ցայտուն է դարձնում այս երկուսի առանձնահատկությունները և տարբերությունները: Իսկ միջմշակութային հաղորդակցության մեջ էթնոկարծրատիպերի ունեցած դերակատարումը խիստ կարևոր է, քանզի հենց դրանց միջոցով են նաև տարբեր էթնոսներ կարծիք կազմում միմյանց մասին, ճանաչում նմանություններն ու տարբերությունները: Նկարչության, երաժշտության, կինեմատոգրաֆիայի մեջ բերված օրինակները ուսանողների համար առավել շեշտված ու պատկերավոր են դարձնում էթնոկարծրատիպերի առկայությունը արվեստում, ցույց տալիս դրանց ազդեցությունը միջմշակութային երկխոսության կայացման վրա:

Դերային բաշխումների, համեմատության, վերլուծության, կարճ հոլովակների, աղյուսակների կազմումը ուսանողներին հնարավորություն է տալիս իրենց գիտելիքներին հիմնվելով՝ բերել օրինակներ և առավել հստակ ու ամբողջական պատկերացում կազմել միջմշակութային հաղորդակցության մեջ էթնոկարծրատիպերի ծագման, տեղի և դերի, ունեցած ազդեցության մասին: Այսպիսով, կիրառված մեթոդների շնորհիվ պարզ է դառնում, որ կարծրատիպն ու էթնոկարծրատիպը նույնը չեն: Էթնոկարծրատիպերի համե-

մատույթան, վերլուծության շնորհիվ ուսանողի համար ակնհայտ է, որ որոշ էթնոկարծրատիպեր չեն արտացոլում իրականությունը և դրանք չափազանցված պատկերացում են այլ էթնոսի մասին և կան էթնոկարծրատիպեր, որոնք մեծապես արտահայտում են ազգային հոգեկերտվածքը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Շեքսպիր Ու., Վենետիկի վաճառականը: Կատակերգություն հինգ արարվածով, Եր., 1933: Shakespeare W., Venetiki vacharakany: Karakergutyun hing ararvatsov, Yer. 1933 (In Armenian).
2. Րաֆֆի, Կայծեր, ԵԺ, հ. 4, Եր., 1963: Raffi, Kaytser, EZH, 1963 (In Armenian).
3. Жерновая О., Смирнова О., Позитивная и негативная роли этнических стереотипов нации в создании имиджа страны (на примере Российской Федерации и Великобритании), Вестник Нижегородского университета им. Н.И. Лобачевского, 2014, №2 (1), 321-327./ Zhernovaya O., Smirnova O., Pozitivnayainegativnayarolietnicheskikhstereotipovnaciivsozdaniimidzastrani (naprimyereRossiskoyFederaciiVelikobritanii), VestnikNijnegorodnogouniversitetaim. N. I. Lobacheskogo, 2014, 2014, №2 (1), 321-327 (In Russian).
4. Мучкина Е., Этнические стереотипы и их отражение в семантике этнонимов, Филология и человек. 2010, №4./Muchkina E., Etnicheskie stereotipi i ikh otrazhenie v semantikeetnonimov, Filologiya i chelovek. 2010, №4.
5. Fumiko Hosokawa, A functional theory of ethnic stereotypes, Humboldt Journal of Social Relations, Spring/Summer 1980, Vol. 7, No. 2 (Spring/Summer 1980), pp. 15-30.
6. Seth Kravitz, London Jokes and Ethnic Stereotypes, Western Folklore , Oct., 1977, Vol. 36, No. 4 (Oct., 1977), pp. 275-301.
7. James Craig Holte, Unmelting Images: Film, Television, and Ethnic Stereotyping, MELUS, Autumn, 1984, Vol. 11, No. 3, Ethnic Images in Popular Genres and Media (Autumn, 1984), pp. 101-108.

NANE MOVSISYAN - ANALYSIS OF ETHNOSTEREOTYPES DURING TEACHING OF THE SUBJECT "INTERCULTURAL COMMUNICATION"

Key words: *Ethnostereotypes, intercultural communication, negative ethnostereotype, positive ethnostereotype*

This article refers to the analysis of ethnostereotypes within the framework of the subject "Intercultural Communication". Introducing the types of ethnostereotypes, emphasis is made on the methods of studying the topic. Referring to autostereotypes and heterostereotypes, distinguishing positive, negative and neutral types, their examples are shown not only in linguistics, literature, but also in art. The article emphasizes that during the teaching of the "ethnostereotypes" topic, it is necessary to present the ethnostereotypes in the context of the history of painting, literature, cinematography, music, highlight cultural features, emphasize the linguistic aspect of ethnostereotypes, the importance of linguistic thinking from the point of view of the formation of ethnonyms, etc. The point of view is put forward that thanks to the dialogue method, role distribution, the student forms an even deeper understanding of the presented topic, ethno-stereotypes, and is able to clearly distinguish a stereotype from an ethno-stereotype, distinguish whether an ethno-stereotype reflects the mentality of a given nation or not, evaluate both positive and negative role of ethno-stereotype in intercultural communication.

НАНЕ МОВСИСЯН - АНАЛИЗ ЭТНОКУЛЬТУРНЫХ СТЕРЕОТИПОВ ПРИ ПРЕПОДАВАНИИ ПРЕДМЕТА "МЕЖКУЛЬТУРНАЯ КОММУНИКАЦИЯ"

Ключевые слова: *Этностереотипы, межкультурная коммуникация, негативный этностереотип, позитивный этностереотип*

В данной статье рассматривается анализ этностереотипов в рамках предмета "Межкультурная коммуникация". Представляя типы этностереотипов, делается акцент на методах изучения данной темы. Обратившись к автостереотипам и гетеростереотипам и выделив положительные, отрицательные и нейтральные черты, показываются их примеры не только в лингвист-

тике и литературе, но и в искусстве. В статье подчеркивается, что в процессе преподавания темы «этностереотипы» необходимо представить их в контексте живописи, литературы, кинематографии, истории музыки, выявить культурные особенности, подчеркнуть важность лингвистической стороны этностереотипов - языкового мышления, с точки зрения формирования этнонимов и т.д. Выдвигается точка зрения, что благодаря методу диалога и ролевому распределению, у студента формируется более глубокое представление о этностереотипах, и он может четко отличить стереотип от этностереотипа, определить, отражает ли этностереотип психологию данной нации или нет, оценить как положительную, так и отрицательную роль этностереотипов в межкультурной коммуникации.